

## ՀԱՅ-ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՈՒՐԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### Յ. 4. ՍՈՒՔԻԱՅԱՆ

Ցարական Ռուսաստանն իր տիրապետության տակ գտնվող Անդրկովկասում վարչատարածքային բաժանումները կատարում էր այն սկզբունքով, որ հնարավոր բոլոր դեպքերում ստեղծվելիք նահանգներում և մարզերում բնակվող ժողովուրդներից որևէ մեկը բացարձակ մեծամասնություն չկազմի: Այս արվում էր անդրկովկասյան ժողովուրդներին միմյանց դեմ լարելու, ազգային տարածքներ ստեղծելու հավակնությունները կանխելու և ռուսական տիրապետությունը հաստատուն դարձնելու նպատակով: Ռուսական կայսրության՝ 1867թ. դեկտեմբերի 9-ի օրենքի համաձայն Անդրկովկասում կատարված վարչական բաժանումը դժգոհություններ առաջացրեց հատկապես հայերի շրջանում, քանի որ ցարական իշխանությունները Թիֆլիսի նահանգի մեջ էին մտցրել հայկական Ջավախքն ու Բորչալուն, Ելիսավետպոլի (Գանձակ) նահանգի մեջ՝ հայկական Ղազախը, Գանձակի լեռնային մասերը, Լեռնային Ղարաբաղն ու Չանգեզուրը:

Դեռ 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության շրջանում, ինչպես ամբողջ Ռուսական կայսրության տարածքում, այնպես էլ Անդրկովկասում, առաջ է քաշվում զեմստվոներ (տեղական ինքնավարության մարմիններ) ստեղծելու և երկրամասը ազգային-վարչատարածքային սկզբունքով վերաբաժանելու պահանջը: 1917թ. փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին, երբ հսկայածավալ Ռուսաստանում վերացվում էին միապետական վարչակարգից ժառանգություն մնացած հասարակական կառույցները, հայության շրջանում հույսեր արթնացան, թե լուծում կգտնի նաև տասնամյակների ընթացքում հասունացած Անդրկովկասն ազգային-վարչատարածքային սկզբունքով վերաբաժանելու խնդիրը: Անգամ Պետրոգրադում Ժամանակավոր կառավարության կողմից ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվել էր տեղական ինքնավարությունների հանձնախումբ: 1917թ. հուլիսին վերջինիս հրավիրած խորհրդակցությանը հայերի կողմից մասնակցում էին Ավետիս Շահխաթունյանը և Գևորգ Խատիսյանը, որոնց հաջողվեց խորհրդակցության մասնակիցներին համոզել զեմստվո մտցնելուց առաջ Անդրկովկասը ենթարկել վարչական վերաբաժանման, որով ստեղծվելու էին երեք հայկական նահանգներ՝ Գանձակի, Ալեքսանդրապոլի և Երևանի, ուր հայերը կազմելու էին համապատասխանաբար՝ 70 %, 66 % և 54 %:

Հայկական Գանձակի նահանգը ստեղծվելու էր Ելիսավետպոլի նահանգը հայկական և թաթարական (իմա՝ աղբյրեջանական) մասերի (Գանձակ և Ելիսավետպոլ) բաժանելու արդյունքում: Գանձակի նահանգի մեջ էին մտնելու հետևյալ գավառները՝ Քարվանսարայի (բաղկացած Ղազախի գավառի լեռնային հայաբնակ մասերից), Գանձակի (կազմված Ելիսավետպոլի գավառի լեռնային հայաբնակ մասերից), Շուշիի (ընդգրկելով Շուշիի գավառի գերակշիռ մասը, Ջևանշիրի գավառի լեռնային հայաբնակ մասերը, Չանգեզուրի գավառի որոշ գյուղախմբերը և Կարյազինի գավառի Հաղբութի, Էդիլյուլի և Առաքյուլի գյուղախմբերը), Չանգեզուրի (բաղկացած Չանգեզուրի գավառի մնացած մասից՝ առանց Բարկուշատի

հովտի թաթարաբնակ մի քանի գյուղախմբերի): Նահանգի կենտրոնն էր լինելու Ելիսավետապոլ քաղաքի հայկական մասը: Ալեքսանդրապոլի նահանգը բաղկացած էր լինելու Ալեքսանդրապոլի (կազմված Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի գերակշիռ մասից և Էջմիածնի գավառի մի մասից), Ախալքալաքի (ընդգրկելով Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառը և Ծալկայի մի քանի հայկական գյուղախմբերը), Լոռու (բաղկացած Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի Լոռու տեղամասից, Բորչալուի ու Եկատերինենֆելդի տեղամասերի որոշ տարածքներից, ինչպես նաև Ալեքսանդրապոլի գավառի մի հատվածից), Կարսի մարզից առանձնացվելիք Կարսի ու Կաղզվանի գավառներից<sup>1</sup>: Բացի Ալեքսանդրապոլի գավառից և Էջմիածնի գավառի մի մասից, ոլոմք պետք է մխացվելին նորաստեղծ Ալեքսանդրապոլի նահանգին, Երևանի նահանգը պահպանելու էր իր նախկին տարածքները<sup>2</sup>:

Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման հայկական ծրագիրը հանդիպում էր վրացիների և թաթարների համատեղ հակազդեցությանը, քանի որ վերջիններիս բավարարում էր եղած իրավիճակը. հակառակ պարագայում նրանք կգրկվեին մի շարք տարածքներից, ուր հայերը մեծամասնություն էին կազմում: Վրաց-ադրբեջանական ընդդիմության, ինչպես նաև Ժամանակավոր կառավարության անկման հետևանքով Անդրկովկասի վերաբաժանման հարցը մնաց առկախ, իսկ 1918թ. մայիսին Անդրկովկասում երեք անկախ պետությունների ստեղծումից հետո տարածքային հարցն արտաքին կողմնորոշման և տնտեսական խնդիրների կողքին դարձավ հայերին, վրացիներին ու ադրբեջանցիներին տարանջատող և հակասություններ առաջ բերող գլխավոր խնդիրը: Հայաստանի Հանրապետության տարածքի զգալի մասի նկատմամբ հավակնություններ ունեցող Ադրբեջանական Հանրապետությունը, թեև իր ձգտումները հիմնավորում էր նաև ազգերի ինքնորոշման սկզբունքով, սակայն իրականությունն այն է, որ նպատակին հասնելու ճանապարհին միջոցների ընտրության հարցում խտրություն չէր դնում, ինչը դժվարացնում էր հայ-ադրբեջանական տարածքային խնդիրների կարգավորումը:

Անդրկովկասի անկախ հանրապետությունների անկման և երկրամասում խորհրդային իշխանության հաստատման շրջանում հայերը գուր էին հույսեր փայփայում, թե Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ արդարացի կորոշվի վիճելի համարվող հայկական տարածքների վերջնական պատկանելությունը: Հակառակ հայերի սպասումների՝ բոլշևիկյան իշխանությունները, առաջնորդվելով Անդրկովկասում ռուսների գերակայությունն ապահովելու և վրացիներին ու ադրբեջանցիներին սիրաշահելու սկզբունքներով, գերադասեցին վիճարկվող տարածքների զգալի մասը տալ Խորհրդային Վրաստանին և Խորհրդային Ադրբեջանին:

Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում տարածքային վեճերի չկարգավորման պատճառների համակողմանի ուսումնասիրությունը մեր օրերում հատկապես արդիական նշանակություն ունի Ղարաբաղյան հիմնախնդրի սկզբնավորման պատճառների բացահայտման համար: Այս խնդրում անուրանալի ներդրում են ունեցել առաջին Հանրապետության անկումից հետո արտերկրում հայտնված նախկին ղեկավար գործիչները, որոնք առավել հաճախ հուշագրական

<sup>1</sup> Կարսի մարզի առավելապես մահմեդականներով բնակեցված մյուս երկու գավառները՝ Արդահանը և Օլթին, միացվելու էին Բաբունի մարզին կամ Ալեքսանդրապոլի նահանգին:

<sup>2</sup> Տե՛ս **А. Шахатунян**, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, էջ 128-134: Հմտ. նաև՝ **Արտ. Արեղևան**, Մենք եւ մեր հարեւանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1928, փետրուար, էջ 96-98: **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 23-24:

բնույթ կրող իրենց աշխատություններում անդրադարձել են նաև Հայաստանի տարածքային խնդիրներին: Վերը հիշատակված գործիչների թվում է նաև Հայաստանի Հանրապետության և Հ. Յ. Պաշտպանության նշանավոր պետական-կուսակցական ղեկավարներից Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանը (1882-1951թթ.)<sup>3</sup>: 1920-ական թթ. իր մի շարք աշխատություններում Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող տարբեր հիմնահարցերի շարքում նա կարևոր տեղ է հատկացնում հայ-աղբյեջանական տարածքային խնդիրների լուսաբանմանը և հանդես գալիս հիմնախնդրի լուծման հստակ առաջարկներով, ինչն արդիական է դարձնում Ռուբենի առաջ քաշած տեսակետների ուսումնասիրությունն ու մեկնաբանումը:

Քննության առնելով հայ-աղբյեջանական տարածքային խնդիրների սկզբնավորման հարցը՝ Ռուբենն իրավացիորեն Գանձակ-Ղարաբաղի շուրջ հայ-աղբյեջանական հակասությունների և տարածքային խնդիրների առաջացման հիմնական պատճառը համարում է Ռուսական կայսրության կատարած վարչական բաժանումները, որոնց հետևանքով հայկական Ղազախը, Լեռնային Գանձակը, Լեռնային Ղարաբաղն ու Չանգեզուրը մտցվել էին Ելիսավետպոլի մահանգի մեջ, որովհետև «այդ միջոցով «հավասարակշռություն» պիտի ստեղծու էր Գանձակի մահանգին մեջ և ժողովուրդները պիտի զբաղ էին ոչ թե ինքնամիտի աշխատանքով. իրենց ազգային մշակույթով և տնտեսական հոգեբով, այլ իրարու միս ուտելով, մրցելով և վիճելով: Իսկ ռուսական իշխանությունը պիտի հանդիսանար իբրև մեղմացուող ազգամիջեան կոնսերու, և, ցանկալի ձեռք մը՝ կիրքերը զսպելու»<sup>4</sup>:

Թուրքերի և աղբյեջանցիների կողմից Շարուրին և Նախիջևանին «հատուկ ուշադրություն» դարձնելը Ռուբենը բացատրում է նրանով, որ այս շրջաններն «անխուսափելի օղակը կը հանդիսանային մէկ կողմէ ռուսական և պարսկական Ատրպէջաններու, իսկ միս կողմէ Տաճկաստանի և Ռուսաստանի թաթարական զանգուածներու միջև»<sup>5</sup>: Ընդհանուր առմամբ Ռուբենը ճիշտ է նկատում համաթուրանական ծրագրերի իրականացման ճանապարհին Շարուր-Նախիջևանը հնարավոր մեկնակետերից մեկը դարձնելու թուրքերի նպատակը: Սակայն ընդունելի չէ, երբ Արևելյան Անդրկովկասի՝ մահմեդականներով բնակեցված տարածքները, որոնք Ռուսական կայսրության իրականացրած վերջին վարչական բաժանումներով մտնում էին Բաքվի և Ելիսավետպոլի մահանգների մեջ, Ռուբենն անվանում է «ռուսական Ատրպէջան»։ այդպիսի աշխարհագրական անվանում երբեք գոյություն չի ունեցել և ինքնին մտացածին բառակապակցություն է: Հանրահայտ իլյուդություն է, որ 1918թ. մայիսին Անդրկովկասի Դաշնային Հանրապետության փլուզման արդյունքում կովկասյան թաթարների կողմից ստեղծված պետությունը թուրքերի խորհրդով անվանվեց Աղբյեջան՝ յուրացնելով Իրանի հյուսիսային մահանգ Ատրպատական-Աղբյեջանի պատմական անվանումը, ինչը նրանց կարծիքով կարող էր նախադրյալներ ստեղծել՝ հավակնություններ հանդես բերելու իրանական մահանգի նկատմամբ:

Կարծում ենք՝ անառարկելի է Ռուբենի այն տեսակետը, որ 1918թ. սկզբին փաստացի լուծված էր վիճելի համարվող Լեռնային Ղարաբաղի, Լեռնային Գանձակի,

<sup>3</sup> Զանի որ Ռ. Տեր-Մինասյանն ավելի շատ հայտնի է Ռուբեն անունով, այդ պատճառով էլ այսուհետև հենց այդպես էլ կանվանենք նրան: Ռուբենի համառոտ կենսագրությունը տես Ա. Ներսիսեան, Ռուբեն (Մինաս Տեր-Մինասեան), «Դրօշակ», 1999, հոկտեմբեր, էջ 36-42:

<sup>4</sup> Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը, «Դրօշակ», 1926, փետրար, էջ 46:

<sup>5</sup> Ռուբեն, Շարուր-Նախիջևան եւ թուրք-թաթարական քաղաքականությունը, «Դրօշակ», 1925, սեպտեմբեր, էջ 72:

Լեռնային Ղազախի պատկանելության հարցը հոգուտ հայերի, քանի որ այս գավառները ենթարկվում էին տեղական Հայոց ազգային խորհուրդներին, սակայն թուրքական արշավանքն ամբողջովին փոխեց իրադրությունը<sup>6</sup>: Անշուշտ, անդրկովկասյան տարածաշրջանում ամբողջովին այլ կլիներ իրավիճակը, եթե չլիներ 1918թ. թուրքական արշավանքը, որն առաջին հերթին ուղղված էր հայերի դեմ և առաջնահերթ նպատակ ուներ վերանվաճելու Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ռուսական բանակների և հայկական կամավորական ջոկատների կողմից ազատագրված արևմտահայկական տարածքները, ինչպես նաև զավթել Արևելյան Հայաստանը: Ինչպես պետք էր սպասել, թուրքական արշավանքի հետևանքով և՛ մարդկային, և՛ նյութական, և՛ տարածքային առումներով Անդրկովկասի ժողովուրդներից ամենից շատ տուժեցին հենց հայերը:

1917-1918թթ. Անդրկովկասում տիրող խառնակ քաղաքական իրավիճակում և 1918թ. թուրքական արշավանքի շրջանում գործունեություն ծավալած շատ գործիչների նման Ռուբենի համար ևս ակնհայտ է, որ թուրքական վերջնագրի արդյունքում Անդրկովկասի Ղաշմային Հանրապետության անկման հետևանքով անկախացած Հայաստանը, որը չէր կարողացել իր իշխանությունը տարածել Անդրկովկասի բոլոր հայկական տարածքների վրա, կանգնելու էր հարևան պետությունների հետ միջպետական սահմանների որոշման դժվարին խնդրի առջև: Հայության քաղաքական ղեկավարությունը ստանձնած Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի 1918թ. մայիսի 28-ի հայտնի հայտարարության այն դրույթը, թե «Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»<sup>7</sup>, Ռուբենը պայմանավորում է հետևյալ հանգամանքներով. «ճախ դրանով կ'ակնարկուէր այն բոլոր հայաբնակ գաւառներին, որ ինկած էին Ադրբեջանի եւ Վրաստանի մէջ, քանի որ հիւսիսից չկար դեռես որոշ սահման. երկրորդ՝ նա չէր ուզէր, Հայաստան անունը գործածելով, ընդառաջել Թուրքիոյ այն ձգտումին, որ Հայկական Հարցի կեդրոնը Տաճկաց Հայաստանից փոխադրուի Անդրկովկասեան Հայաստանի մէջ»<sup>8</sup>: Ամբողջովին կիսում ենք Ռուբենի այս տեսակետը. վերը բերված հայտարարությամբ Հայոց ազգային խորհուրդը մի կողմից խուսափում էր հարևան պետությունների հետ հակասությունների մեջ հայտնվելուց, մյուս կողմից քողարկված կերպով ակնարկում էր իր իրավունքների մասին հայկական բոլոր, այդ թվում՝ վիճելի համարվող տարածքների նկատմամբ:

Յուրաքանչյուր նոր ստեղծվող պետության առջև դրված կարևոր խնդիրներից են պետության համար ռազմավարական սահմաններ ապահովելն ու ազգահավաքով զբաղվելը: Իրավացի է Ռուբենը, երբ անխուսափելի է համարում այն հանգամանքը, որ անկախացումից հետո Ադրբեջանի ղեկավարները պետք է ձգտեին Արևելյան Հայաստանում բնակվող 577.000 և Վրաստանում բնակվող 126.000 մահմեդականներին իրենց բնակեցրած տարածքներով միացնել Ադրբեջանական Հանրապետությանը<sup>9</sup>: Ադրբեջանը ոչ միայն անվիճելիորեն իրենն էր

<sup>6</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Թեհրան, 1982, էջ 135-136:

<sup>7</sup> «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն)», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Եր., 2000, էջ 18: Իրականում այս հայտարարությունը կատարվել է 1918թ. մայիսի 30-ին:

<sup>8</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, էջ 137:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 180: Ռուբենն այս թվական տվյալները ստանում է «Կովկասյան օրացույցի» տարբեր համարներից և հրապարակված տարբեր աշխատություններից:

համարում Չաքաթալայի գավառը, այլև վիճելի էր համարում Թիֆլիսի և Բորչալուի գավառների որոշ տարածքներ, ուր բնակվում էին զգալի թվով մահմեդականներ: Այս տարածքները զավթելու դեպքում Ադրբեջանի համար պայմաններ կստեղծվեին հիմնականում մահմեդականներով բնակեցված Արբաբայի և Չրլղրի շրջանների միջոցով կապվելու Կարսի մարզի մահմեդականների ու իր հովանավոր Օսմանյան կայսրության հետ և գերիշխող դիրք գրավել Անդրկովկասում: Սակայն համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը և Անդրկովկասից հեռանալը խառնեց ադրբեջանցիների խաղաքարտերը: Օսմանյան կայսրության պարտության հետ կապված ադրբեջանցիների շրջանում եղած հուսախաբություններին ավելանում էր նաև այն, որ ադրբեջանական այս հավակնությունները հանդիպում էին հայերի ու վրացիների հակազդեցությանը, ինչը և, ինչպես ճիշտ նկատում է Ռուբենը, էականորեն դժվարացնում էր չափազանց հավակնոտ այս ծրագրի իրագործումը և ադրբեջանցիներին հարկադրում առժամանակ հետաձգել այն<sup>10</sup>:

Ռուբենի բերած տվյալների համաձայն՝ 1919թ. Ադրբեջանը հավակնություններ էր հանդես բերում նախկին Ելիսավետպոլի նահանգի մեջ մտած Լեռնային Ղարաբաղի, Լեռնային Գանձակի, Չանգեզուրի, նախկին Երևանի նահանգի մեջ մտած Նախիջևանի, Շարուր-Ղարալազյազի և Սուրմալուի գավառների, Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի գավառների մի մասի, ինչպես նաև Կարսի մարզի նկատմամբ, որը տարածվելու էր մինչև Բաթում՝ Ադրբեջանի համար ելք ապահովելով դեպի Սև ծով<sup>11</sup>: Ռուբենի հաշվումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 67.367 քառ. վերստ<sup>12</sup> տարածքից (ներառյալ Ղարաբաղն ու Չանգեզուրը) Ադրբեջանը պահանջում էր 50.520 քառ. վերստը՝ մեծահոգաբար Հայաստանին «թողնելով» 16.847 քառ. վերստ տարածություն, ինչի հետևանքով Անդրկովկասի հայության 2/3-ը մնալու էր Ադրբեջանի և Վրաստանի սահմաններում<sup>13</sup>: Մեծ հմտություն պետք չէ նկատելու համար, որ ադրբեջանցիների ցանկությունների բավարարման դեպքում Հայաստանի Հանրապետությունը կզրկվեր ոչ միայն կենսունակ պետություն դառնալու հնարավորությունից, այլև հնարավոր է նույնիսկ կասկածի տակ դրվեր հայկական պետության գոյության փաստը, իսկ Անդրկովկասի հայությունը կկանգներ բնաջնջվելու իրական վտանգի առջև:

Մուսավաթական Ադրբեջանն օգտվում էր այն իրադրությունից, որ Հայաստանի Հանրապետության տարածքը կրճատելու իր ծրագրի իրականացմանը խոչընդոտող ոչ մի արտաքին ուժ չէր երևում, իսկ ադրբեջանական ծրագրին դեմ հանդես եկող հայությանն ի հակակշիռ Ադրբեջանն իր տրամադրության տակ ուներ ռազմաստրատեգիական և տնտեսական տեսակետներից Անդրկովկասի ամենանպաստավոր հայկական տարածքներում բնակվող հարյուրհազարավոր մահմեդականների, որոնք հարկ եղած դեպքում ներսից կպայքեցնեին Հայաստանը: Այս իրավիճակը հաշվի առնելով՝ Ռուբենն ամենևին պատահական չի համարում, որ «Երևանում (Ադրբեջանի - Հ. Ս.) դիւանագիտական ներկայացուցիչ նշանակելու օրից»<sup>14</sup> սկսում է Հայաստանը քայքայելու տենդոտ աշխատանքը<sup>15</sup>: Բնական է, որ

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 181:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 183:

<sup>12</sup> 1 քառ. վերստը հավասար է 1,14 կմ<sup>2</sup> (տե՛ս նույն տեղը, էջ 178):

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 184-185:

<sup>14</sup> Հայաստանում Ադրբեջանի առաջին դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին Երևան է ժամանել 1919թ. մարտի 14-ին (տե՛ս Ս. Մ. Քառյան, Հայաստանի միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1923 թվականներին, Եր., 2005, էջ 85):

<sup>15</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, էջ 193:

Հայաստանի Հանրապետության ղեկավարները պետք է ձգտեին հնարավոր բոլոր միջոցներով խոչընդոտել աղբրեջանական դիվանագետների և գործակալների՝ Հայաստանը ներսից քայքայելու աշխատանքներին, ինչի լավագույն օրինակներից է Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից Երևանում Աղբրեջանի դեսպանատան ծածկագիրը հայտնաբերելն ու դիվանագիտական ներկայացուցիչներ Թեքինսկու և Հախվերդովի՝ մուսավաթական կառավարության ղեկավարների հետ ունեցած գրագրությունները վերահսկելը: Մեծ կարևորություն տալով աղբրեջանական գործակալների կատարած քայքայիչ գործունեությունն արտացոլող փաստաթղթերին՝ Ռուբենն այս հեռագրերից առավել ուշագրավները մտցրել է իր հուշագրության մեջ<sup>16</sup>:

Ռուբենի վկայությամբ 1919թ. աշնանը Հայաստանի՝ գերազանցապես մահմեդականներով բնակեցված տարածքների բնակիչներն աղբրեջանա-թուրքական գործակալների հրահրումով ամբողջովին կամ մասամբ հրաժարվում էին ենթարկվել Հայաստանի Հանրապետության իշխանություններին՝ իրենց քայլերը հիմնավորելով ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1918թ. հունվարի 8-ի հայտնի ելույթում առաջ քաշված ազգերի ինքնորոշման սկզբունքով<sup>17</sup>: Մյանից հետո կարելի է միայն զարմանալ, երբ Ռուբենը գրում է, թե հայկական կառավարությունը, գիտակցելով իր թուլությունը, փայծում էր, «հետեւելով Աղբրեջանի օրինակին, Աղբրեջանի Գանձակ նահանգի լեռնային հայաբնակ մասերում ստեղծել նոյնանման անկախ կամ ինքնավար հայկական իշխանություններ, ինչպես իրենք էին արած Նախիջևան, Շարուր եւ այլն»<sup>18</sup>: Այստեղից կարելի է ենթադրել, որ եթե աղբրեջանցիները հավակնություններ հանդես չբերեին Նախիջևանի, Շարուրի և նախկին Երևանի նահանգի ու Կարսի մարզի մյուս տարածքների նկատմամբ, ապա Հայաստանի Հանրապետության իշխանությունները կհրաժարվեին նախկին Ելիսավետպոլի նահանգի հայկական մասերից, ինչը միանգամայն սխալ սկզբունք է: Մեկ այլ դեպքում Ռուբենն ափսոսանքով արձանագրում է, որ Աղբրեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը, «կտրուած լինելով հայկական Գանձակ նահանգից, հնարատրություն չուներ նոյնանման ձեռնարկներ անել (իմա՝ հակաաղբրեջանական քայազություն իրականացնել - Հ. Ս.) Աղբրեջանի հայկական գաւառներում, եւ նրա գործունեութիւնը կը սահմանափակուէր տեղեկութիւններով ու անվերջ բանակցութիւններով»<sup>19</sup>: Տարօրինակ է, որ այնպիսի փորձառու քաղաքական գործիչ ու մտավորական, ինչպիսին Ռուբենն է, որն անկասկած տեղյակ պետք է լիներ թեկուզ 1919թ. փետրվարին Փարիզի Հաշտության վեհաժողովին ներկայացված հայկական պահանջների մասին<sup>20</sup>, նախկին Ռուսական կայսրության Ելիսավետպոլի նահանգի հայկական մասերը մուսավաթական Աղբրեջանին պատկանող տարածք է համարում և զարմանալիորեն անվանում «Աղբրեջանի հայկական գաւառներ» (իսկ «հայկականը» նրա մոտ առավել հաճախ հայաբնակի իմաստ ունի): Եվ սա այն պարագայում, երբ Ռուբենն այլ առիթներով Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրն ու Լեռնային Գանձակն իրավացիորեն Հայաստանին պատկանող տարածքներ է համարում: Անվիճելի իրողություն է, որ Հայաստանի Հանրապետությունը,

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 193-204: Փաստաթղթերի ամբողջական հրատարակությունը տե՛ս «Գաղտնի փաստաթղթերը. Աղբրեջանի դաւադրական գործունեութիւնից մի էջ», Եր., 1920:

<sup>17</sup> Տե՛ս Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, էջ 207-212:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 246:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 250:

<sup>20</sup> Տե՛ս «Հայկական հարցը խաղաղութեան ժողովին առջեւ», Բոստոն, 1919:

չնայած պետության առջև ծառայած ներքին և արտաքին բազմաթիվ խնդիրներին, երբեք այս տարածքներն Ադրբեջանի մաս չճանաչեց և բացահայտ ու զաղտնի բազմապիսի գործողությունների դիմեց իր իշխանությունն այստեղ տարածելու համար<sup>21</sup>:

Անկախության հռչակումից հետո ներքին և արտաքին ասպարեզներում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած դժվարություններին ավելանում էին Հայաստանի մահմեդական բնակչության խռովություններն ու պետությունը բնականոն վիճակի մեջ դնելու գործում նրանց կողմից հարուցված դժվարությունները, որոնք Հայաստանի Հանրապետությանն ուղեկցեցին պետության գոյության ողջ ընթացքում: Միանգամայն համաձայն ենք Ռուբենի այն տեսակետին, որ պետության ներսում ադրբեջանական խժոժություններին վերջ տալու համար «պետք էր թաթարներին (իմա՝ ադրբեջանցիներին - Հ. Ս.) ճանաչել իբր պետական դաւաճանների, եւ նրանց պետք էր ուժով ենթարկել օրէնքներին եւ կամ հեռացնել Հայաստանի սահմաններից: ... Գալու էր շուտով 1920 թուականը, երբ Բիւրօ-Կառավարութեան ստեղծումով, պիտի այդ ծրագիրը իր ամբողջ ծաւալով գործադրուէր եւ վերջ դրուէր Հայաստանի ներքին քայքայման»<sup>22</sup>: Ամենևին պատահական չէ, որ 1920թ. մայիսին բուշլիկների կողմից կազմակերպված հակապետական ապստամբությունը ճնշելուց հետո Բյուրո-կառավարության ներքին գործերի և զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի գլխավորությամբ սկսվեց Հայաստանի ծոցում գտնվող և Հանրապետության իշխանությունների նկատմամբ անհնազանդ կարգավիճակ որդեգրած մահմեդականներով բնակեցված տարածքների հնազանդեցումն ու մաքրագործումը: Իրար հետևից Չանգիբասարը, Բեյլուք-Վեդին, Դավալուն, Շարուրը, Նախիջևանի զգալի մասը, Սևանա լճի ավազանը և այլ տարածքներ ենթարկվեցին հայկական իշխանություններին, ինչի հետևանքով 1920թ. ամռանը Հայաստանի Հանրապետության սահմանները տարածվում էին Արցախից մինչև Օլթի<sup>23</sup>:

1920թ. ապրիլի 28-ին մուսավաթական Ադրբեջանի խորհրդայնացումը նոր իրավիճակ ստեղծեց տարածաշրջանում. Անդրկովկաս էր վերադարձել Ռուսաստանը՝ երկրամասը վերագրավելու և այդտեղ խորհրդային կարգեր հաստատելու անխախտ նպատակամղումով: Ռուբենը գրում է, որ 1920թ. հուլիսին Նախիջևանում հայերի օգտին ընթացող հայ-ադրբեջանական կռիվներում նոր իրավիճակ ստեղծվեց, երբ «Ռուս խորհրդային զորքը Սիւնիքի վրայով կը մտնէ Նախիջևան քաղաքը և զայն անբաժան մասը կը հրատարակէ «կարմրած» Ատրբեյջանին»<sup>24</sup>: Համաձայն լինելով Ռուբենի այն տեսակետին, որ 1920թ. հուլիսի 28-ին խորհրդային բանակի՝ Նախիջևան մուտք գործելը կարուկ փոխեց ուժերի հարաբերակցությունն ի վնաս հայկական կողմի, անհրաժեշտ ենք համարում պարզաբանել, որ ժամանակի փաստաթղթերը չեն հաստատում Ռուբենի կողմից բերված այն միտքը, թե խորհրդային բանակը Նախիջևանն Ադրբեջանին պատկանող տարածք է հայտարարել: Հայտնի իրողություն է, որ Խորհրդային Ռուսաստանը, գրավելով Նախիջևանը, նպատակ ուներ կապվելու քեմալական Թուրքիայի հետ: Այս պատճառով էլ

<sup>21</sup> Այս մասին տես Վ. Ղազախեցյան, Հայաստանի Հանրապետության իշխանությունը Լեռնային Ղարաբաղում և Չանգեզուրում, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2003, № 1, էջ 37-46:

<sup>22</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, էջ 329-330:

<sup>23</sup> Առավել մանրամասն տես Ա. Աստուածատրեան, Ռուբենը, «Հայրենիք», 1966, յուրմիս, էջ 52-53:

<sup>24</sup> Ռուբեն, Շարուր-Նախիջևան եւ թուրք-թաթարական քաղաքականութիւնը, էջ 73:

Նախիջևանը գրավելուց հետո ռուսներն այն ոչ թե միացրեցին Խորհրդային Ադրբեջանին (մեկ անգամ չէ, որ վերջինս մեծ հավակնություն է հանդես բերել), այլ հայտարարեցին վիճելի տարածք, ինչն իրավական վավերացում ստացավ 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված հայ-ռուսական համաձայնագրով. «խորհրդային զորքերի կողմից վիճելի տարածքների (խոսքը Ղարաբաղի, Չանգեզուրի և Նախիջևանի մասին է - Հ. Ս.) զբաղեցումով չի կանխորոշվում այդ տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության իրավունքների հարցը»<sup>25</sup>: Ամենայն հավանականությամբ Ռուբենին շփոթության է մատնել ռուսների՝ Նախիջևան մտնելուն հաջորդող օրերին Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված, այսպես կոչված, «Նախիջևանի հեղկոմի» վերջնագիրը, ուր ասվում էր, թե «Նախիջևանի շրջանի աշխատավոր ժողովուրդն իրեն հռչակել է ՌՍՖՍՀ հետ դաշնակցած Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության անբաժան մասը»<sup>26</sup>: Չպետք է մոռանալ, որ Ռուբենը, շատ հաճախ ձեռքի տակ չունենալով անհրաժեշտ փաստաթղթեր, երբեմն տարբեր հարցերի մասին հիշելով է գրում: Այսինքն՝ ոչ թե խորհրդային բանակը, այլ Նախիջևանը հայկական զորքերի կողմից ազատագրվելու վտանգի հետևանքով լուծարված Նախիջևանի մուսուլմանական ազգային խորհրդրդի հիմքի վրա ստեղծված կեղծ «հեղկոմն» է այն Խորհրդային Ադրբեջանի մաս հայտարարել:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո ավարտվեց Շարուր-Նախիջևանի համար Հայաստանի իշխանությունների իրական պայքարը, իսկ Մոսկվայի 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Նախիջևանը դրվեց Խորհրդային Ադրբեջանի խնամակալության տակ՝ «պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»<sup>27</sup>, որի տակ հասկացվում էր Հայաստանը: 1921թ. հոկտեմբերի 13-ին Խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ Կարսում Անդրկովկասի երեք խորհրդային հանրապետությունների (Խորհրդային Հայաստան, Խորհրդային Վրաստան և Խորհրդային Ադրբեջան) և քեմալական Թուրքիայի միջև կնքված «բարեկամության» պայմանագրով, փաստորեն, անդրկովկասյան հանրապետությունների մասով վավերացվեց Մոսկվայի պայմանագիրը: Ռուբենն իրավացի է, երբ այս կապակցությամբ այն տեսակետն է հայտնում, թե «յիշեալ պայմանագրութիւնները կը հաստատեն թէ Թուրքիա մեծ շահախնդրութիւն ցոյց տալով Նախիջեւանի շրջանի մասին, թեւ չի կրնար իր երկրին կցել զայն, ինչպէս Կարսը, Սուրմալուն, բայց կ'աշխատի ապահովել իր շահերը, թոյլ չտալով որ կցուի Հայաստանին, այլ դառնայ ինքնավար իսլամ և ցեղով թուրք համարող Ատրպէյջանի հովանաւորութեամբ»<sup>28</sup>: Հայտնի իրողությունն է, որ 1921թ. Մոսկվայի կոնֆերանսում Նախիջևանն Ադրբեջանի խնամակալությանը հանձնելու որոշումն ընդունվել է թուրքական պատվիրակության համառ պնդումների արդյունքում. Խորհրդային Ռուսաստանի համար մեծ առումով կարևոր նշանակություն չունեք, թե Նախիջևանը փաստացի ռուսներին ենթակա անդրկովկասյան հանրապետություններից որի մասը կկազմեր, և զարմանալի չէ, որ ռուսական

<sup>25</sup> «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», էջ 248:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 468, ք. 33: Փաստաթղթի վրա ծանոթագրված է, որ նրա պատճենը ուղարկվում է Զինվորական նախարարին՝ Ռուբենին (տե՛ս նույն տեղում, ք. 33 հակ.):

<sup>27</sup> «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)», խմբագրությամբ՝ Ջ. Ս. Կիրակոսյանի, Եր., 1972, էջ 501:

<sup>28</sup> Ռուբեն, Շարուր-Նախիջևան եւ թուրք-թաթարական քաղաքականութիւնը, էջ 73:



իշխանություններն ավելի ճիշտ համարեցին այս տարածքի անցումը Խորհրդային Աղյբեջանին, քան նրա բռնակցումը Թուրքիային<sup>29</sup>: Իսկ Օսմանյան կայսրությանը երբևէ չպատկանած ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Սուրմալուն որպես փոխհատուցում քեմալական Թուրքիային է տրվել 1920թ. հունվարի 28-ին ընդունված Թուրքական ազգային ուխտում նշված Բաթումից հրաժարվելու պատճառով<sup>30</sup>:

Անդրկովկասի երեք անկախ հանրապետությունների խորհրդայնացումից հետո խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան նախորդ շրջանից ժառանգություն մնացած տարածքային խնդիրների կարգավորմանը: Ռուբենն իրավամբ «մաքիավելեան» է անվանում հայ-աղյբեջանական տարածքային վեճերի լուծման բուշխիկյան իշխանությունների ձևաչափը, որով մաս-մաս արվեցին հայկական գավառները: Նա անընդունելի է համարում, որ խորհրդային իշխանությունները Չանգեզուրի գավառի մի մասը միացրել են Խորհրդային Աղյբեջանին, որի մի հատվածի վրա ստեղծել են, այսպես կոչված, «Կարմիր Քրդստանը», Գանձակի լեռնային հայաբնակ մասը Աղյբեջանի մի սովորական գավառ են դարձրել՝ կտրելով Ղարաբաղից, իսկ այս վերջինս էլ բաժանել են դաշտային և լեռնային հատվածների՝ Աղյբեջանի իշխանության ներքո ստեղծելով ինքնավար Լեռնային Ղարաբաղ<sup>31</sup>: Խորհրդային իշխանությունների վերը բերված վարչական բաժանումները նայատակ ունեին Չանգեզուրը բաժանել Ղարաբաղից, իսկ այս վերջինս էլ՝ Դիլիջանի և Նոր-Բայազետի շրջաններից: Պատահական չէ, որ շատ չանցած «Կարմիր Քրդստանը» լուծարվեց, իսկ այստեղ բնակվող քրդերի մեծ մասը Խորհրդային Աղյբեջանի իրականացրած քաղաքականության արդյունքում ձուլվեց թաթար զանգվածի հետ: Մեկ այլ տեղ հայկական տարածքների՝ Աղյբեջանին փոխանցելու ռուսական քաղաքականությունը Ռուբենը պայմանավորում է նրանով, որ «ռուսերը հայ ժողովուրդը կը համարեն իրենց կողմը, և բարեկամին բարեկամությունը ձեռք բերելու պետք չեն զգար. հաշիւը և շահը պիտի թելադրեին թշնամիին բարեկամությունը ձեռք բերել, մոյնիսկ քիչ մը վիրատրելով իրեն բարեկամ ճանչցուած Հայերը»<sup>32</sup>: Ի դեպ, Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների սահմանների գծման ժամանակ բուշխիկյան իշխանությունների հակահայկական գործելակերպը պայմանավորված էր նաև վրացիների և աղյբեջանցիների համեմատությամբ հայերի թույլ լինելով ու հայությանը հուզող տարբեր խնդիրների առնչությամբ Խորհրդային Հայաստանի ղեկավարների առավել հաճախ դրսևորած կրավորական կեցվածքով:

Ռուբենն իր աշխատություններում չի սահմանափակվում սուկ եղած փաստական վիճակը ներկայացնելով: Նա հանդես է գալիս նաև հայ-աղյբեջանական տարածքային խնդիրներն ու հակամարտությունը վերջնականապես լուծելու հստակ առաջարկներով, որոնք հիմնվում են Անդրկովկասում բնակվող երեք հիմնական ժողովուրդների (հայեր, վրացիներ, աղյբեջանցիներ) տեղաբաշխվածությունը, տրնտեսական, կլիմայական և աշխարհագրական գործոնները հաշվի առնելու վրա: Ռուբենի առաջարկի համաձայն՝ հայերը, կազմելով Անդրկովկասի բնակչության

<sup>29</sup> Մանրամասն տե՛ս Գ. Ա. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Եր., 1999, էջ 445-447:

<sup>30</sup> Տե՛ս Բ. Հ. Հարությունյան, Երկու ճշգրտում, «Գիտության Գլոբուս», 2001, № 1, էջ 73:

<sup>31</sup> Տե՛ս Ռուբեն, Չանգեզուրի պայքարը, «Դրօշակ», 1925, դեկտեմբեր, էջ 173: Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը, էջ 49-50:

<sup>32</sup> Ռուբեն, Նախկարյը եւ անոր նշանակութիւնը Հայաստանի համար, «Դրօշակ», 1925, հոկտեմբեր, էջ 115:

25 %-ը, պետք է ստանային երկրամասի տարածքի 29,3 %-ը (47.679 քառ. վերստ), քաթար-ադրբեջանցիները, կազմելով երկրամասի բնակչության 24,1 %-ը, ստանալու էին տարածքի 36,7 %-ը (59.172 քառ. վերստ), վրացիները, կազմելով երկրամասի բնակչության 31,5 %-ը, պետք է ստանային տարածքի 34 %-ը (54.975 քառ. վերստ), որով Լեռնային Գանձակը, Ղարաբաղը, «Կարմիր Քրդստանը», Շարուր-Նախիջևանը, Ախալքալաքը, մախկին Բորչալուի գավառից Վրաստանին անցած հայաբնակ տարածքները պետք է միացվեին Հայաստանին<sup>33</sup>: Չարմանալի է, երբ մեկ այլ տեղ Ռուբենն այն համոզմունքն է հայտնում, թե Լեռնային Գանձակը, Ղարաբաղը և մյուս հայկական տարածքները Հայաստանին վերադարձնելը բխում է նաև Ադրբեջանի շահերից, քանի որ այս տարածքները կախող են խոչընդոտել Ադրբեջանի բնականոն զարգացմանը<sup>34</sup>: Վերը բերված տվյալները վկայում են, որ Ռուբենը ձգտում էր փոխգիշուձային առաջարկներ կատարել՝ զուր հույսեր փայփայելով, թե դրանք կընդունվեն նաև վրացիների ու ադրբեջանցիների կողմից, և վերջիններս դեմ չեն արտահայտվի Վրաստանին ու Ադրբեջանին միացված հայկական տարածքներն իրենց օրինական տերերին վերադարձնելուն:

Իր աշխատություններում համակողմանի քննության ենթարկելով հայ-ադրբեջանական տարածքային խնդիրների սկզբնավորման հարցը, հիմնախնդրի զարգացման ընթացքը, վիճելի համարվող հայկական տարածքների մեծագույն մասը բուլղարիկյան իշխանությունների կողմից Խորհրդային Ադրբեջանին փոխանցման պատճառները՝ Ռուբեն Տեր-Մինասյանը կատարում է ուշագրավ դիտարկումներ, որոնք արդյունք են հիմնախնդրի խորը պատկերացման և Անդրկովկասի աշխարհագրական ու աշխարհաքաղաքական նշանակության ճիշտ ըմբռնման: Չնայած այս ամենին՝ ոչ բոլոր դեպքերում կարելի է համաձայնվել Ռուբենի առաջ քաշած տեսակետների ու կատարած եզրահանգումների հետ:

**А. К. СУКИАСЯН — Освещение армяно-азербайджанских территориальных проблем в трудах Рубена Тер-Минасяна.** — Пестрота национально-го состава Закавказья, целенаправленно используемая Российской империей в политике административно-территориального деления края в целях упрочения своего владычества в регионе, раздувание межнациональной вражды, а также религиозно-культурные и экономические противоречия стали основными причинами возникновения территориальных проблем между новообразованными государствами.

В статье рассматриваются и поныне сохраняющие свою актуальность взгляды выдающегося государственного и военного деятеля Первой Республики Армении Рубена Тер-Минасяна по поводу возникновения и дальнейшего развития армяно-азербайджанских территориальных споров и путей их разрешения, что и на сегодняшний день является актуальным.

<sup>33</sup> Տե՛ս Ռուբեն, Հայաստանը Անդրկովկասեան դաշնակցութեան մէջ, «Դրօշակ», 1926, մայիս, էջ 143, 146: Ռուբենն այս թվական տվյալները ստանալիս օգտվում է «Կովկասյան օրացույցի» տարբեր համարներից, Ա. Շահխաթունյանի հայտնի աշխատությունից և խորհրդրդային իշխանությունների կողմից հրատարակված վիճակագրական տվյալներից: Ի դեպ, Ռուբենի վերը բերված առաջարկի հիմքում ընկած է դեռ 1917թ. առաջ քաշված Անդրկովկասն ազգային-տարածքային սկզբունքով վերաբաժանելու հայկական ծրագիրը (հմմտ. "Армяно-грузинский вооруженный конфликт", Баку, 1919, էջ 3):

<sup>34</sup> Տե՛ս Ռուբեն, Հայաստան եւ Ատրպեճան, «Հայրենիք», 1927, յունիս, էջ 83: